

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/4

26 մայիսի 2015 թ.

Քննարկվեց Սվետլանա Քոչարյանի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 10.03.2015 թ-ի թիվ 1119 որոշման դեմ:

Սվետլանա Քոչարյանի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի մարտի 12-ին ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչությունից Սվետլանա Քոչարյանը (այսուհետ նաև գանգատաբեր) ստացել է ծանուցագիր վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 170.3 հոդվածի հատկանիշներով:

Սվետլանա Քոչարյանը մարտի 12-ին այցելել է Մաշտոցի ՀՏ և պարզել, որ Ա/Ձ Սվետլանա Մինասյանի պարտավորությունը պետական բյուջեի հանդեպ կազմում է 423.065 դրամ:

Գանգատաբերը տեղեկացել է, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի հարկային տեսչության պետի կողմից 10.03.2015 թ-ին կայացվել է թիվ 1119 որոշումը, որով Ա/Ձ Սվետլանա Մինասյանից որոշվել է գանձել 423.065 դրամ պարտավորության գումար, որից հաստատագրված վճար՝ 45.366 (3.299) դրամ, որն առաջացել է հաստատագրված վճարի հայտարարագրերից՝ ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հիման վրա, եկամտահարկ՝ 45.366 դրամ, որն առաջացել է եկամտահարկի հաշվարկներից, սոցիալական ապահովության վճար՝ 374.400 դրամ, որն առաջացել է 2009-2012թ.թ. նվազագույն սոցիալական վճարներից: Որոշումը Սվետլանա Քոչարյանը ստացել է 13.03.2015թ-ին:

Սվետլանա Քոչարյանը հայտնում է, որ որպես անհատ ձեռներեց գրանցվել է 1993թ-ին և գործունեությունը դադարեցրել է 1998թ-ին, ինչի վերաբերյալ հայտարարությունը և պետական ռեգիստրի վկայականը ներկայացրել է հարկային տեսչություն և այդ օրվա դրությամբ պետական բյուջեի հանդեպ որևէ պարտավորություն չի ունեցել:

2000թ-ին գանգատաբերին հրավիրել են Մաշտոցի հարկային տեսչություն, տվել են փաստաթուղթ, որը ներկայացրել է նախկին <Արագած> կինոթատրոնի հարևանությամբ ճաղավանդակներով շենք:

Գանգատաբերը 2000թ-ի օգոստոսից բնակվել է ՌԴ-ում և միայն 2007թ-ին մեկ շաբաթով ժամանել է Հայաստան և կատարել ազգանվան փոփոխություն: Երկրորդ անգամ ՌԴ-ից վերադարձել է 18.09.2014թ-ին:

Ստանալով ծանուցագիրը և որոշումը գանգատաբերը 13.03.2015թ-ին դիմում է ներկայացրել Մաշտոցի ՀՏ խնդրելով ծանոթանալ իի հարկային գործին, իր կողմից ներկայացված փաստաթղթերը և պարտավորությունների առաջացման հիմքերը գտնելու համար:

Պատասխան գրությամբ հայտնվել է, որ հարկային գործը արխիվացվել է, անհատ ձեռնարկատիրոջ վկայականը հարկային մարմին հանձնված չի եղել, լուծարման վերաբերյալ որևէ տեղեկություն առկա չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գանգատաբերը հայտնում է, որ 1998թ-ից հետո ՀՀ-ում ձեռնարկատիրությամբ չի զբաղվել, քանի որ հանձնել է վկայականը և գտնվել է ՌԴ-ում: Հետևապես անհասկանալի է, թե ինչու են պարտավորություններ հաշվարկվել:

Իսկ ինչ վերաբերվում է վարչական ակտին, ապա դրանում չեն պահպանվել վարչական ակտին ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ ակտը որոշակի, հստակ և հասկանալի չէ, ակտում նշված է, թե ինչ գծով է պարտավորությունը, մինչդեռ նշված չէ, թե կոնկրետ որ ժամանակահատվածի համար է առաջացել:

Այսպիսով, վերը նշվածը հիմք ընդունելով՝ կարելի է ասել, որ 10.03.2015թ-ի թիվ 1119 որոշումը կազմվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով նշված օրենքի 69, 70, 71 և 77 հոդվածներով, գանգատաբերը խնդրում է դիմումն ընդունել վարույթ, քննության առնել այն և անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 10.03.2015թ-ի թիվ 1119 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Սվետլանա Մինասյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 09.03.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 423.065 դրամ, որից հաստատագրված վճար 45.366 դրամ, որն առաջացել է հաստատագրված վճարի հայտարարագրերից՝ ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հիման վրա, եկամտահարկ՝ 45.366 դրամ, որն առաջացել է եկամտահարկի հաշվարկներից, սոցիալական ապահովության վճար՝ 374.400 դրամ, որն առաջացել է 2009թ-ից 2012թ.թ. նվազագույն սոցիալական վճարներից, որը ենթակա է գանձման: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի կողմից 10.03.2015 թ-ին ընդունվել է թիվ 1119 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Սվետլանա Մինասյանից 423.065 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի բ) կետի համաձայն՝ Վարչական ակտը պետք է պարունակի վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 10.03.2015 թ-ի թիվ 1119 որոշման մեջ վարչական ակտի հասցեատիրոջ ազգանունը սխալ է նշված: Մասնավորապես, Որոշման մեջ վարչական ակտի հասցեատիրոջ տվյալները նշված են Ա/Ձ Սվետլանա Մինասյան, սակայն գործում առկա ապացույցների համաձայն վարչական ակտի հասցեատերը պետք է հանդիսանար Ա/Ձ Սվետլանա Քոչարյանը:

Իր հերթին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

Տվյալ դեպքում Որոշման մեջ նշված է, որ չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 423.065 դրամ, որից հաստատագրված վճար 45.366 դրամ, եկամտահարկ 45.366 դրամ, և սոցիալական ապահովության վճար 374.400 դրամ: Սակայն, նշված պարտավորությունների հանրագումարն իրականում կազմում է ոչ թե 423.065 դրամ, ինչպես որ նշված է Որոշման մեջ, այլ՝ 465.132 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Որոշումը կայացվել է վերը նշված իրավական նորմերի պահանջների խախտմամբ, ինչը և հիմք է հանդիսանում ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Որոշումը չեղյալ համարելու համար:

Մինևույն ժամանակ Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա տվյալների, գանգատաբերի 09.03.2015 թ-ի դրությամբ չկատարվար պարտավորությունների ընդհանուր չափը կազմում է 423.065 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 10.03.2015 թ-ի թիվ 1119 որոշումը:

2. ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ-ին՝ ուսումնասիրել Ա/Ձ Սվետլանա Քոչարյանի չկատարված պարտավորությունների հիմնավորվածության հանգամանքը և բավարար ապացույցների առկայության դեպքում կայացնել նոր գանձման որոշում:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

